Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի հ. 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (13 դասաժամ),, ֆիզկուլտուրայի (22 դասաժամ), ռուսաց լեզվի (20 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ) (3 դասաժամ) եւ ինֆորմատիկայի (5 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման եւ հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26 - րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 30 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 - ից 14:00 - ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 2-ին՝ ժամը 15:00, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի հ. 7 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Կաքավաձոր 1/4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 78-90-46 հեռախոսահամարով: